ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անտոնյանը, Արսեն Եղիազարյանը, Կարինե Թովմասյանը, Սայեն Հայրապետյանը, Մելիք Նազարյանը, Էլմիրա Ոսկանյանը, Նվարդ Սարգսյանը, Վարդուհի Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Լեվոն Գրիգորյան, Հասմիկ Ավետիսյան, Զորիկ Գրիգորյան, Լուսինե Աստաբացյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 2-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԱՐԳԻՍ ՍԵՅՐԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՎՆԱՆ ՔԱՋԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԱՐԳԻՍ ՍԵՅՐԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՌԱՖԻԿ ՎԻԿՏՈՐԻ ԴԻԼԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԹԱՄԱՐԱ ՅՈՒՐԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի N 155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՄՈՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ԲԻՋԱԽՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 92-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ԱՆԱՀԻՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ԼԻԼԻԹ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԲՈՇՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17. ԱՐՄԵՆ ԵՓՐԵՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

18. ՎԱՐԴԱՆ ՏԻԳՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

19. ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍՈՒՔԵՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

20. ՆԻՆԱ ԳՐԻՇԱՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

21. ՎԱՐԴԱՆ ԿՈՐՅՈՒՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

22. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

23. <<ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

24. <<ԿԱՐԵՆ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

25. ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՒՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

26. ՀՐԱՆՏ ՌԱՖԱՅԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

27. ՆՈՒՐՎԱՐԴ ԳԱՐԵԳԻՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

28. ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

29. ՄԵՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆԻ ՈՐՍԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

30. ԱՐԹՈՒՐ ՎԱՀԱԳՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԱՆԻ ՎԻՏՅԱՅԻ ԱԶԱՏԽԱՆՅԱՆԻՆ, ՄԵՐԻ ԳԱՌՆԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՀԱԳՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ՎԱՆԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՂՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

31. ՀԱՅԱՐՓԻ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

32. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-2 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԱՐԳԻՍ ՍԵՅՐԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Սարգիս Կարապետյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս 38/54 հասցեում գտնվող պարիսպը (արտաքին մակերեսը՝ 4,74քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.00697 հա բնակելի կառուցապատման հողատարածքը (ծածկագիր՝ 03-003-0126-0204) ուղղակի վաճառքով օտարելու բնակիչ՝ Սարգիս Սեյրանի Կարապետյանին:

2.Պարսպի ուղղակի վաճառքի գինը կազմում է 9334 (ինը հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

3.Պարսպի զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 21.055 (քսանմեկ հազար հիսունհինգ) ՀՀ դրամ:

4.Պարսպի սպասարկման ու պահպանման համար զբաղեցված հողամասից ավել զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 865.618 (ութ հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր տասնութ) ՀՀ դրամ:

5.Պարիսպը և հողամասն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՎՆԱՆ ՔԱՋԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Հովնան Մարգարյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք ք. Մասիս, նոր թաղամաս 17/42 հասցեում Հովնան Քաջիկի Մարգարյանի կողմից կառուցված խանութը (արտաքին մակերեսը՝ 21,6 քմ) և սպասարկման ու պահպանման համար հատկացված 0.00216 հա հասարակական կառուցապատման հողամասը (ծածկագիր՝ 03-003-0137-0722) ուղղակի վաճառքով օտարելու բնակիչ՝ Հովնան Քաջիկի Մարգարյանին:

2.Օրինական ճանաչված շինության ուղղակի վաճառքի գինը կազմում է 382.774 (երեք հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ:

3.Խանութով զբաղեցված և սպասարկման համար հատկացված հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 95.943 (իննսունհինգ հազար ինը հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ:

4.Օրինական ճանաչված գույքը և հողամասն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԱՐԳԻՍ ՍԵՅՐԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Սարգիս Կարապետյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք ք. Մասիս, նոր թաղամաս 38/55 հասցեում Սարգիս Սեյրանի Կարապետյանի կողմից կառուցված հասարակական շինությունը (արտաքին

մակերեսը՝ 22,10 քմ), պարիսպը (արտաքին մակերեսը՝ 3,19 քմ) և սպասարկման ու պահպանման համար հատկացված 0.00568 հա հասարակական կառուցապատման հողամասը (ծածկագիր՝ 03-003-0126-0192) ուղղակի վաճառքով օտարելու բնակիչ՝ Սարգիս Սեյրանի Կարապետյանին:

2.Օրինական ճանաչված շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 448.165 (չորս հարյուր քառասունութ հազար հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:

3.Շինություններով զբաղեցված և սպասարկման համար հատկացված հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 224.667 (երկու հարյուր քսանչորս հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ:

4.Շինությունների սպասարկման ու պահպանման համար զբաղեցված հողամասից ավել զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 82.884 (ութսուներկու հազար ութ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ:

5.Օրինական ճանաչված գույքը և հողամասն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՌԱՖԻԿ ՎԻԿՏՈՐԻ ԴԻԼԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Ռաֆիկ Դիլանյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք գ. Դաշտավան Մասիս-Վաղարշապատ խճուղի 2-րդ անցուղի 6 հասցեում Ռաֆիկ Վիկտորի Դիլանյանի կողմից կառուցված ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 58,6քմ) և սպասարկման ու պահպանման համար հատկացված 0.00586 հա բնակելի կառուցապատման հողամասը (ծածկագիր՝ 03-033-0043-0006) ուղղակի վաճառքով օտարելու բնակիչ՝ Ռաֆիկ Վիկտորի Դիլանյանին:

2.Օրինական ճանաչված շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 83.330 (ութսուներեք հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

3.Ավտոտնակի զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 110.034 (հարյուր տաս հազար երեսունչորս) ՀՀ դրամ:

4.Օրինական ճանաչված գույքը և հողամասն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Լսեցին
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԹԱՄԱՐԱ ՅՈՒՐԻԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Թամարա Քոչարյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք ք. Մասիս Նոր թաղամաս 10/4 հասցեում Թամարա Յուրիկի Քոչարյանի կողմից կառուցված ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 21,0քմ) և սպասարկման ու պահպանման համար հատկացված 0.00210 հա բնակելի կառուցապատման հողամասը (ծածկագիր՝ 03-003-0128-0940) ուղղակի վաճառքով օտարելու բնակիչ՝ Թամարա Յուրիկի Քոչարյանին:

2.Օրինական ճանաչված շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 48.636 (քառասունութ հազար վեց հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ:

3.Ավտոտնակի զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 143.521 (մեկ հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ:

4.Օրինական ճանաչված գույքը և հողամասն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 21-ի N 136-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ.

<<ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ նշված տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել Մասիս համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողատարածքները կանաչապատման և բարեկարգման նպատակով 50 տարի ժամկետով վարձակալական իրավունքով տրամադրելու համար կազմակերպել մրցույթ՝

1.1<< Արարատի մարզ Մասիս քաղաք 5-րդ թաղամաս 5-րդ փող թիվ 33 /0,01 հա, ծածկագիր՝03-003-0712-0007/, Մասիս քաղաք 5-րդ թաղամաս 5-րդ փող թիվ 35 /0,01 հա, ծածկագիր՝03-003-0712-0003/, Մասիս քաղաք 5-րդ թաղամաս 5-րդ փող թիվ 37 /0,01 հա, ծածկագիր՝03-003-0712-0006/, Մասիս քաղաք 5-րդ թաղամաս 5-րդ փող թիվ 39 /0,01 հա, ծածկագիր՝03-003-0712-0005/, Մասիս քաղաք 5-րդ թաղամաս 5-րդ փող թիվ 45 /0,01 հա, ծածկագիր՝03-003-0712-0004/, Մասիս քաղաք 7-րդ փող թիվ 24/4 /0,003971 հա, ծածկագիր 03-003-0087-0146/,հասցեներում գտնվող հողամասերը: Մեկնարկային գին սահմանել 10.000 /տաս հազար/ << դրամ:

1.2. << Արարատի մարզ Մասիս գ.Արգավանդ Օդանավակայանի փողոց 2/2 /0,00408 հա, ծածկագիր՝ 03-018-0235-0021, գ.Արգավանդ Օդանավակայանի փողոց 2/3 /0,00613 հա, ծածկագիր՝ 03-018-0235-0023/ հասցեներում գտնվող հողամասերը: Մեկնարկային գին սահմանել 200.000 /երկու հարյուր հազար/ << դրամ:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի N 155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 09-ի N 155-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ.

« ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՄԵՐԻ ԵՆԳՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, № 912-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով, որ Մերի Ենգոյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել մեկ տարվա ընթացքում Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք Հրանտ Վարդանյան փողոց թիվ 10/10 հասցեում գտնվող ավտոտնակը /արտաքին մակերես՝ 29.5 քմ/ և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,01035 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 03-003-0424-0066/ ուղղակի վաճառքով օտարել Մերի Ենգոյանին:

2. Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 35666 /երեսունհինգ հազար վեց հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ 1քմ-ի արժեքը 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ:

3. Ավտոտնակով զբաղեցված և սպասարկման համար հատկացված հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 36.020 (երեսունվեց հազար քսան) ՀՀ դրամ:

4.Ավտոտնակի սպասարկման ու պահպանման համար զբաղեցված հողամասից ավել զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 271.062 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար վաթսուներկու) ՀՀ դրամ:»

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/

Լսեցին

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2/փ -118 եզրակացությունը և ՀՀ Արարատի մարզպետ Ս. Թևոնյանի գրությունը՝ /մտից՝ 17.05.2023թ. N 6433/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի գլխավոր հատակագծի սույն փոփոխությունը՝

- ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Նոր Խարբերդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 03-070-0132-0046 կադաստրային ծածկագրով, 0.1446հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի բնակելի տուն կառուցելու նպատակով:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2/փ -116 եզրակացությունը և ՀՀ Արարատի մարզպետ Ս. Թևոնյանի գրությունը՝ /մտից՝ 10.05.2023թ. N 6046/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրի գլխավոր հատակագծի սույն փոփոխությունը՝

- ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Նոր Խարբերդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 03-070-0203-0003 կադաստրային ծածկագրով, 0.17607հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքի հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի բնակելի տուն կառուցելու նպատակով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՄՈՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ԲԻՉԱԽՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 92-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38.1 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Հովհաննես Շամոյանի դիմումը՝ /հայտ՝ 23.05.2023թ. N CPA-0000-8377/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Դաշտավան բնակավայրում գտնվող Արտակ Բիչախչյանին, Հովհաննես Շամոյանին սեփականության իրավունքով պատկանող 03-033-0151-0008 կադաստրային ծածկագիրը կրող, 4.9329 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, արոտավայր հողատեսքի հողամասից

2,0հա հողամասի /համաձայն որակավորում ունեցող մասնգետի կողմից տրված հատակագծի/ նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ձկնաբուծական տնտեսություն կառուցելու նպատակով:

2 ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի ավագանու 11.05.2023թվականի թիվ 92-Ա << ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՄՈՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ԲԻՉԱԽՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> որոշումը ճանաչել չեղյալ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/

Լսեցին
ԱՆԱՀԻՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Անահիտ Ենգիբարյանի լիազորած անձ Խաչիկ Խաչատրյանի դիմումը՝ /հայտ՝ 24.05.2023թ. N 6795/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Գեղանիստ բնակավայրում գտնվող Անահիտ Խաչիկի Ենգիբարյանին սեփականության իրավունքով պատկանող 03-028-0104-0067 կադաստրային ծածկագիրը կրող, 0.1327 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, վարելահող հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Լսեցին
ԼԻԼԻԹ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԲՈՇՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Լիլիթ Բոշյանի դիմումը՝ /հայտ՝ 04.05.2023թ. N 8377/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Այնթապ բնակավայրում գտնվող Լիլիթ Վարազդատի Բոշյանին սեփականության իրավունքով պատկանող 03-012-0323-0007 կադաստրային ծածկագիրը կրող, 0.307 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, վարելահող հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/

Լսեցին

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով Հովտաշատ բնակավայրի վարչական ղեկավարի 28.04.2023 թվականի զեկուցագիրը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում նշված հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրում գտնվող 03-070-0116-0079 կադաստրային ծածկագրով, 0.14341 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 23032023-03-

0080/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով,104690 ՀՀ դրամ,

1.2 Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրում գտնվող 03-085-0029-0007 կադաստրային ծածկագրով 2,0 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 08022023-03-0048/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով, 3970000 ՀՀ դրամ,

1.3 Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրում գտնվող 03-085-0029-0006 կադաստրային ծածկագրով 8,20786 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 15032023-03-0014/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 12219452 ՀՀ դրամ,

1.4 Մասիս համայնքի Ռանչպար բնակավայրում գտնվող 03-081-0137-0006 կադաստրային ծածկագրով 4,01188 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 04042023-03-0016/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 3981791 դրամ:

1.5 Մասիս համայնքի Դաշտավան բնակավայրում գտնվող 03-033-0010-0028 կադաստրային ծածկագրով 0,06577 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 04042023-03-0058/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 132691 ՀՀ դրամ:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Դպրոցականների փողոց, 1-ին նրբանցք 15/6 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0128-0457 կադաստրային

ծածկագրով, 0.00373 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 10252 ՀՀ դրամ,

1.2 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, 4-րդ թաղամասի 3-րդ փողոց, 15/4 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0156-0160 կադաստրային ծածկագրով, 0.004 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

1.3 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Ազատամարտիկների փողոց, 19/93 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0136-0370 կադաստրային ծածկագրով, 0.02093 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

1.4 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Նոր թաղամաս, 23/14 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0138-0413 կադաստրային ծածկագրով, 0.00135 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

1.5 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Նոր թաղամաս, 9/22 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային խառը կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0137-0720 կադաստրային ծածկագրով, 0.04133 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

1.6 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, 4-րդ թաղամասի 3-րդ փողոց, 1/5 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային խառը կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0074-0052 կադաստրային ծածկագրով, 0.0179 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

1.7 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, 4-րդ թաղամասի 3-րդ փողոց, թիվ 41 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային խառը կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0156-0157 կադաստրային ծածկագրով, 0.0123 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ ,

1.8 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Հ. Շիրազի փողոց, 117/1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային խառը կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0137-0711 կադաստրային ծածկագրով, 0.01065 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

